կայ կիկղոպները միայն կարող էին այդ ժայռերը միմեանց վրայ շարել եւ իրանց համար բնակարան կառուցանել: Բայց կիկղոպները իրանց ամբարտակի ժայռերը չէին միացնում որեւիցէ շաղախով, իսկ այստեղ կրային շաղախը այնպէս կապել էր ժայռերը միմեանց հետ, որ ահագին պատերը ձեւացնում էին քարեղէն ամուր, միապաղաղ զանգուած: Եւ այդ բոլորը կատարոել էր գետնի տակ, ուր արեւի ճառագայթները երբեք չէին թափանցում, ուր մշտական մռայլի մէջ ապրում էր մի մռայլ ժողովուրդ եւ երկնքի լոյսը տեսնում էր իր ստորերկրեայ վիրապի նեղ երդիկից միայն:

Մռա՛յլ էր, մռա՛յլ... եւ այդ մռայլ մթութիւնը խիստ ճնշող, սարսափեցնող տպաւորութիւն էր գործում: Մռայլ գոյն էին ստացել ահագին պատերը, մռայլ գոյն էին ստացել առաստաղի հաստ գերանները, մռայլ գոյն էին ստացել փայտեայ մեծ սիւները, մռայլ գոյն էին ստացել եւ նրանց վրայ կապուած «անթառամ ծաղիկներիէ խոշոր փունջերը: Եւ այդ ներկը տոել էր բոլոր առարկաներին մշտական ծուխը, որ վեր էր բարձրանում մշտավառ կրակից: Դա տնային անհանգչելի օջախն էր, այն սրբութիւնը, որի անունով մինչեւ այսօր էլ երդւում է հայ գիւղացին: Այդ օջախը կազմուած էր սենեակի կենտրոնում, որտեղ մխում էին մի քանի կտոր փայտեր, մխում էին, երբեմն աղօտ բոցեր եւ երբեմն մեղմ կայծեր արձակելով: Այդ օջախի շուրջը ձմեռային գիշերներում հաւաքւում էր նահապետական գերդաստանը եւ տան ծերունին պատմում էր երեխաներին հայրերի գործը: Այդ օջախը փոխարինում էր երկնքի արեգակին, այդ օջախը լոյս եւ ջերմութիւն էր սփռում մռայլ բնակարանին: Այդ օջախը վառւում էր միշտ, նրա կրակը երբեք չէր հանգչում: Այդ օջախը յիշեցնում էր ինձ Էտնայի մշտավառ կրակը, որտեղ կիկղոպները Արամազդի համար շանթեր էին դարբնում: Բայց ես այստեղ շանթեր չէի տեսնում, այդ կրակից միայն մեղմ կայծեր էին ցայտում... թէեւ այդ հրաբուխի մէջ նոյնպէս կիկղոպներ էին բնակւում...

Ռեսի ընտանիքը մեծ էր, մեծ էր, որպէս նրա ընդարձակ բնակարանը: Այստեղ ապրում էին մի քանի սերունդ միասին՝ մեծ պապը, նրա որդիները, նրա թոռները եւ նրա թոռնեայքը: Տան սրահում քսանից աւելի օրօրոցներ էին ճօճւում: Հարսներով, աղջիկներով, երիտասարդներով ու պատանիներով լի էր տունը: Երեխաները թիւ ու համար չունէին: Ռեսը իր տասնեւմէկ եղբայրների միջնակն էր: Նոյն թոի կէսի չափ քոյրեր ունէր նա: Նրա մայրը դեռ կենդանի էր, իսկ հայրը երկու տարի առաջ վախճանոել էր հարիւր եւ հինգ տարեկան հասակում: Մեծ պապին ես չտեսայ. նա գնացել էր մերձակայ գիւղը իր աղջկան տեսնելու: Բոլոր եղբայրները ապրում էին անբաժան, միասին եւ նոյն յարկի տակ, կրտսերը խոնարհւում էր աւագին: Իսկ բոլորի